

Արգում Սիմոն «ՆՈՐՍՎԵԼՊՆԵՐ», հրատարակութիւն Դ. Գ. Մազմանեանի. Թուս-
չուք, 1903 թ., գինն է 50 սանտիմ:

**Մի թրքահայ գրողի վեց պատմուածքների հաւաքածուն
է, 1-ն Խնդրանք մը, 2-ն Ամուլրիի պատմութիւն, 3-ն Պղզ-
տիկը, 4-ն Խորտակուած սրտի մը վրէժը, 5-ն Ուշ մնացած,
6-ն Տժգունածները.**

Արգում Սիմոն՝ այն անհամար թրքահայ գրողներից մինն է,
որոնք չը գիտեն իսկապէս, թէ հնչնու ևն գրում: Նախադասու-
թիւններ, նախադասութիւններ ու նախադասութիւններ: Դարձը-
նում ես գրքոյի էջերը, դարձնում ես անհամբեր՝ այդ գեղե-
ցիկ բառերի շեղակոյտի մէջ գոնէ մի համակրելի, առողջ միտք
զանելու յօւսով, բայց իզնուր: Խօսքը, գրելու կարողութիւնը մար-
դուն տրուել է ոչ թէ շաղփաղփելու, շատախօս թռչունի նման
երկար ու միօրինակ ճառողելու, այլ մնքեր ու գաղափարներ
արտայայտելու համար: Մանաւանդ մեզ պէս խաւարի ու յու-
սահատութեան մէջ քարշ ընկած ժողովրդի համար, բացարձա-
կապէս անհասկանալի են դիլետանտ, իրանց պորտին նա-
յելով միայն զբաղուած գրողները: Գիտենք, այս, որ
թուրքիայում գրողի համար պայմանները այնքան էլ թոյլատու-
չեն, բայց դատարկ լինել այնչափ, որչափ է պ. Արգում Սիմոն—
պարզապէս ըմբոստացուցիչ է, Մարդ վերջապէս նեարդերից,
մարդկային մաից ու արինից զուրկ պէտք է լինի, որպէսզի,
ապրելով հանդերձ գերազանցօրէն շահագրգիռ ու յուղիչ մի
միջավայրում, այդ աստիճան գլուխ պտոյտ տուող ոչնչութիւն-
ներով միայն զբաղուի:

Օրինակ. վերցրէք, առաջին պատմուածքը՝ Խնդրանք
մը-ն: Հեղինակը պատահել է մի չափազանց գրաւիչ աղջկայ,
հեռուից նրան սիրել է: Աղջկայ ծնողները, որ ապրելիս են եղել
իրանց տան դիմաց, «գիշեր մը, լուսնկայ գիշեր մը» այցելու-
թեան են եկել իրանց աղջկայ հետ: «Այդ գիշերն աւեն մարդէ
աւելի երջանիկ են եղել երիտասարդն ու երիտասարդուհին:
«Մեկնելու պահուն, մեր մայրերէն հեռու, թեռասին (պատըշ-
գամբ) սանդուղին վրայ, մօտեցար ինձ և ամբողջ ուժովկա
ձեռքս սեղմեցիր—որ ատեն տերեւի մը պէս կը գողացի ես—ու
ինձ ըսիր քու ամենէն անուշ ձայնովդ. «Գիշեր բարի, ես ընաւ
չը պիտի մոռնամ զքեզ, կերդնում, դուն ալ զիս մի մոռ-
նար»:

Ժամանակ յետոյ յանկարծ երիտասարդի ձեռքն է անցը-նում սիրած աղջկայ հարսանելան հրաւիրազիրը, ուկեզօծ տառերով, «բոցեղէն տառեր՝ որ աչքերս այրեցին», Յաւիտենական պատրանքի ձանձրոյթից մնոցնող նոյն նկարագրութիւնը. զոյ-աերուն շքեղազարդ տաճարը յիմնայտակ կը կործանուէր.» և եծ անկում անդնյախոր, ուր էութիւնս կը ջախջախուէր ու պատանիի կեանքս յուսահատութեան մութ մթնոլորտին մէջ կը ինդդուէր»:

Հակառակի իր «էութեան ջախջախումին» սիրահարը ապ-րում է սակայն ու երբեմնի սիրականին ուղղում է հետեւեալ ինդրանքը.

«Տիկին... խնդրանք մը կուգամ ընել ձեզ թախանձանքով, երբ 14 տարեկան ըլլայ աղջիկնիդ, մի թողուք զինքը, որ պատուհանին առաջ նստի, երբ մանաւանդ դիմացի տունը տղայ մը գտնուի»:

Միւս արտադրութիւնները սրանից տարրեր բաներ չեն: Ամուլիի մը պատմութիւնը ներկայացնում է մի տղամարդ, որ ամուսնութիւնն է ջատագովում, նրան հարց են տալիս, թէ ինչո՞ւ ուրեմն ինքը չէ ամուսնացել, քանի որ այդքան խանդավառութեամբ է խօսում ամուսնութեան մասին. Մարդը պատմում է մի պատմութիւն: Հաւանել է մի աղջկան, նրանով սաստիկ գրաւուել. յետոյ սակայն դուրս է եկել, որ աղջիկը շշպարուած է և զգուելիօրէն տգեղոյ:

«Անկէ իվեր շատ քիչ հանդիպած եմ արհեստական չեղող գեղցկութեանց, սակայն անոնց համար ալ չեմ զգացած, ինչ որ զգացած էի Սաթենիկի նկատմամբ, առաջին անգամ»:

Պղտիկը պատմուածքի մէջ նիւթ չը կայ: Մի փոքրիկ դպրոցականի հօրը մի օր կաթուածահար եղած տուն են բերում: Երեխան պատահածի մասին տեղեկութիւն չ'ունի, հարցընում է իր մօրը, որ ծածկում է իրողութիւնը. բայց երեխան տան վարի յարկում գտնուող սենեւակից հօր անընդհատ տընքողն է լսում: Շարունակում է դպրոց գնայ մի տեսակ անծանօթ, ճնշող տիրութեան տակ: Դպրոցն ունի պարզ, այլ գեղցիկա մի սովորութիւն: «Վարժարանին բոլոր աշակերտները, թէ մանչ և թէ աղջիկ, պարտաւոր էին նրեցաբթի և շաբաթ առաւօտները եկեղեցի երթալ:

Փոքրիկը եկեղեցի է գնում և «Ճէր, ողորմնաշանի ժամանակ, Ճնոր հիւանդաց բժշկութիւն» խօսքի վրայ, բայց է անում երկու բազումները անօրինակօրէն անկեղծ ջերմնուանդութեամբ մը», ուղղում է աչքերը «մնծ խորանին մոմի լոյսերով ողողուած

Յիսուսի պատկերին ու «պաղատագին, սրտակիդիկ ձայնով» աղջակում է.

«—Ա՛խ Աստուած, հայրիկիս ալ բժշկութիւն տնւրց:

Այդ օրը դպրոցից տուն է դառնում. տանը մնե բազմութիւն կայ. մայրը, ազգականները նրան պինդ համբուրում են. Երեխան իր մօր վզին փաթաթուելով, հօր մասին է հարցնում.

«—Երուսաղէմ գնաց տղամ, ըստ մայրը.

—Երուսաղէմ գնաց մի, յարեց պղտիկը խնդումով, ըսել է քի ըռըդցաւ. (լաւացաւ)...

—Հորդցաւ.

—Դիտես, մայրիկ, շարունակեց տղան ուրախութենէն մօրը վիզը թողլով և բարձրաձայն, այսօր «Տէր Ողորմնա» ին ատեն ես հայրիկիս ըռըդնալուն համար աղօթք ըրի ժամը...»

Այս խօսքերի վրայ սենեակում հեկեկանքներ են պայմում. Մայրը «վիրջին ճիգ մըն ալ ընելով» ասում է.

«—Վաղն ալ, տղամ, գնա ինձի համար ժամը աղօթք ըրէ, որպէսզի քեզ կարենամ մնացնել մինակսա...»

Խորտակուած սրտի վրէժ. ում մի երիտասարդ իրան խաբող մի աղջկանից հետեւալ կերպով է լուծում իր վրէժը. Նշաննում է մի ուրիշ օրիորդի հետ: Յնտոյ իրան խաբող աղջը-կան հրաւիրում է Դասպար աղայի, մի հարուսա ունթիէի տանը տեղի ունենալիք անուանակոչութեան երեկոյթին. Հերա-նոյշը գալիս է իր ծնողների հետ: Երուանդը Հերանոյշին իրը թէ չի նկատում, ամբողջ երեկոյթը անց է կացնում իր նշանածի հետ պարելով, երգելով, զուարճանալով: Հերանոյշը կատաղում է: Երեկոյթը վերջանալուն մօտ, Երուանդը նշմարում է Հերանոյ-շին «վիրաւոր եղնիկի մը պէս վայրենի, կարմիր՝ արհուրալից նայուածքով որ՝ առանձին թաւշապատ թիկնաթուի մը մէջ ըն-կողմանած էր»:

Երուանդը գնում է դէպի Հերանոյշին իր նշանածի հետ ու խօսքն ուղղելով

«—Դուք հնս, օրիորդ... մինչդեռ ես բաւական ատենէ իվեր ձեղի կը փնտրեմ, ձեղի ներկայացնելու. համար... նըշա-նածն...»

Հերանոյշն, որ չէր սպասում մի այդպիսի անակնալի, ո-րովհետեւ կարծում էր թէ Երուանդն իրան պիտի ընտրէ կեանքի ընկեր, տժգոյն, շանթահարուած ընկնում է թիկնաթուի մէջ, ևմիակ բառ մը ունենալով իր վայրագօրէն սեղմուած ակուանե-րուն մէջ. խուլ, անլսելի, առիւծի մոնշիւն մը.

—Վատ...»

Ուշ մսացած և Տժգունածները պատմուածքներն էլ այս
կարդի բաներ են:

Ահա ժամանակակից պոլսահայ զրողի մատահոգութիւնները:
Սա գրականութիւն չէ, այլ ինքնասպանութիւն:

ԶԱՒՀՆ

Mars, «Խճառիկ ԱՄՈՒՍՆԱՑԱՑ» (կաղանդի գրոյց), Թագու, 1903 թ., գ. 10 կ.

Այս գրքոյիկի նիւթը մի փոքրիկ մելօդրամատիկական պատմուածք է:

Օրիորդ Լիզան (այժմ Միֆրան Էֆէնտիի կինը) և իր փոքր եղբայր Երուանդը մնում են որբ, օրուայ հացի կարօւ: Լիզան շաբաթը մի մէջիտ (1 ր. 60 կ.) վարձով ծառայութեան է մանում մի ժատ հարստի տուն: Կազանդի նախօրէքին քոյրն ու եղբայրը տուն են գնում Պերայի Մեծ-Փողոցով (Պոլսում): Երեխան տեսնում է սիրուն իրաղալիքները և ազերանում քրոջը գնել: Քըրոջ գրապանում կայ միայն 1 դահեկան (8 կոտկ.), այն էլ հազիւ չոր հաց առնելու բաւական լինի վաղուան համար: Լիզան հանգստացնել է աշխատում մանկանը, բայց տուն հասնելուն պէս մանուկը հիւանդանում է վսաղալքի կարօտից», մանկան այդ մեծ հոգախց... և կարող է... «մեռնեկ» (՝՝՝): Քոյրը յետ է դառնում և մի մեծ ձի է գողանում Bon Marché-ի մեծ խանութից, բերում մինչև իրանց տան դուռը և խղճի խայթ զգալով... յետ է տանում (՝՝՝). «առէք, ես գողացայ, բայց խիղճս տանջեց» ասելով տալիս է դրամարկղի մօտ նստած գանձապահն և դուրս փախչել աշխատում: Այդ խօսակցութիւնը լսում է երիտասարդ Միհրանը, խաղալիքներ, անուշեղէններ և այլն գնում տալիս է նրան... վերջն էլ հետն ամուսնանում: Իրը յիշատակ կաղանդի այդ նախօրէքին, Լիզան ու Միհրանն ամէն տարի տօնածառ են սարքում և իրանց թաղի բոլոր աղքատ ու որբ երեխաներին հրաւիրում, որպէսզի տարուայ մէջ գննէ մի օր միսիթարուեն խեղճ մանուկները, զուարձանան... եւ այդ բարեգործութիւնով լիապէս բաւականանում է տիկին Լիզան-դա է նրա հասարակական հսկայական դործունէութիւնը...